

## Թ Պ. Թ Ա. Կ Յ Ո Ւ Թ Ւ Կ Ն

Առ. Պ. Հ. ի 8. Խալիպեան Ուսումնարանին աշակերտաց առողջութիւնը Աստուծոյ ողորմութեամբը այնքան լաւ է որ չորս հինգ ամսէ իվեր եւ ոչ մէկ հիւանդ մը կայ հիւանդանոցին մէջ : — Զայս հարկ համարեցանք ծանուցանել որ ամենայն ծնողաց սիրտը հանդիսա լինի . եւ չհաւատան չարախոսաց ոմանց ըստացին որ իբր թէ ուսումնարանի շենքին նորութիւնը վնաս տուեր է աշակերտաց առողջութեանը :

Առ. նոյն . Հիմնովին սուտ է այն խօսքն որ կտարածեն ոմանք չարախութեամբ , որ իբր

թէ Վիճակիս Առաջնորդին ամբաստանութեամբը ձերբակալ եղեր կամ անյայտ եղեր է նորա չարակամներէն մէկը :

Առ. նոյն . Տապախեան երիտասարդը " էթէ իթէոդոսիս վախճանեցաւ , այլ Եալթայի ծովուն մէջ ցաւալի կերպով խղդուեցաւ , ուր յետ ճաշուն դնացեր է եղեր լուացուելու :

Առ. Տ. Ե. Լաւաճի դասերը յետ առժամանակեայ ընդհատութեան նորէն սկսան տպագրուիլ . բայց լարանի ժողովները առայժմ դադրած են :

## ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՆԵԼՈՒԿԲ

Ա.

Մէկ թագաւոր մի գիտեմ արեւելեան աշխարհի ,  
Որ իւր կեանքէն զըրկեցաւ իսէր միոյ գոհարի .  
Գոհարն էր զարդ սեղանոյ աստուածային տաճարի ,  
Եւ եղեւ դառըն դահիճ թագաւորին այն չարի :

Բ.

Ո՞վ էր գիտես այն անուանի դերասան ,  
Որոյ մահուն պատճառ եղեւ տող մի բան :

Գ.

Ո՞վ էր քերթողն այն անուանի ,  
Որ շատ երգեաց երգ գեղանի ,  
Ոչ լոկ մինչ էր նա կենդանի ,  
Այլ եւ իմութ գերեղմանի . —  
Բայց իւր ձայնէն ինք սասանի ,  
Քիսկոյն կըրկին կումեռանի :